Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

- անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թվականի ապրիլի 28-ի № 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն(մասնակցած լինելու դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբեի 1-ից նոյեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 19-ին՝ ժամը 15^{00}-ին,** ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Մրգավան Ավ. Իսահակյան 45/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 091777002 հեռախոսահամարով: